ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.06.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ

քննող անձի

թիվ ՍՑ-ԷՍ-2018/67

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 31.05.2018թ. թիվ 03/26-3/9740-18 գրությամբ «Տ-Ինդասթրի» ՓԲԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ոստիկանության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 30.05.2018թ. թիվ 01.3/11/501171-18 գրության հիման վրա, 31.05.2018թ. «Տ-Ինդասթրի» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. ՀՀ ոստիկանության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ ոստիկանությունը 30.05.2018թ. թիվ 01.3/11/501171-18 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի համաձայն, Ձեզ է ուղարկվում ՀՀ ԿԱ Ո ԳՀԱՊՁԲ-2018-ԳՈՒՅՔ/1 ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած «Տ-Ինդասթրի» ՓԲԸ-ի փաստաթղթերը՝ գնման գործընթացին իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով»:

ՀՀ ոստիկանությունը պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. «Տ-Ինդասթրի» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Տ-Ինդասթրի» ՓԲԸ-ն 11.06.2018թ. գրությամբ Բողոքներ քննող անձին ներկայացրել է գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ, որ «Տ-Ինդասթրի» փակ բաժնետիրական ընկերությունը 23.04.2018թ. մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ ԿԱ ոստիկանության կողմից 12.04.2018թ. հրապարակված ՀՀ ԿԱ Ո ԳՀԱՊՁԲ-2018-ԳՈՒՅՔ/1 ծածկագրով գրասենյակային գույքի ձեռքբերման գնանշման հարցման ընթացակարգով մրցույթին:

23.04.2018թ. գնահատող հանձնաժողովի կողմից հրապարակված արձանագրությունը էլեկտրոնային եղանակով ծանուցվել է «Տ-Ինդասթրի» ՓԲԸ-ի էլեկտրոնային հասցեին, համաձայն որի «Տ-Ինդասթրի» ՓԲԸ-ի հայտը ճանաչվել է 3-րդ չափաբաժնով բավարար գնահատված հայտ և «Տ-Ինդասթրի» ՓԲԸ-ն ճանաչվել է նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից կատարված մասնակցի հարկային պարտավորությունների վերաբերյալ հարցման արդյունքում պարզվել է, որ «Տ-Ինդասթրի» ՓԲԸ-ն ունի չվճարված հարկային պարտավորություն 23.04.2018թ.

դրությամբ:

Ցանկանում ենք տեղեկացնել, որ տեխնիկական խնդիրների պատճառով «Տ-Ինդասթրի» փակ բաժնետիրական ընկերության կողմից 19.04.2018թ. 900008000490 հաշվեհամարին իրականացված հարկերի վճարման հանձնարարականը չի հաստատվել բանկի կողմից և չեղարկվել է: Նշված չեղարկման մասին ծանուցմանը մեր իսկ անփութության պատճառով տեղեկացել ենք ավելի ուշ, ինչի պատճառով ուշ է կատարվել նաև հարկային վճարումը»:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էին «Տ-Ինդասթրի» ՓԲԸ-ի ներկայացուցիչներ Լևոն Եղիազարյանը և Գրիգոր Չոբանյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/67 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 31.05.2018թ. թիվ 03/26-3/9740-18 գրությունը, ՀՀ ոստիկանության 30.05.2018թ. թիվ 01.3/11/501171-18 գրությունը և կից փաստաթղթերը, «Տ-Ինդասթրի» ՓԲԸ-ի կողմից 11.06.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացված գրավոր դիրքորոշումը, ՀՀ ԿԱ Ո ԳՀԱՊՁԲ-2018-ԳՈՒՅՔ/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ՀՀ ԿԱ Ո ԳՀԱՊՁԲ-2018-ԳՈՒՅՔ/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 23.04.2018թ. ժամը 11:30-ին կայացած նիստի թիվ 2 և 11.05.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությունները, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի հարկ վճարողների սպասարկման վարչություն թիվ 20 բաժնի կողմից 11.05.2018թ. «Տ-Ինդասթրի» ՓԲԸ-ին 23.04.2018թ. և 07.05.2018թ. տրված տեղեկանքները, Ընկերության կողմից Ընթացակարգին ներկայացված մասնակցության հայտի պատճենը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 10.05.2018թ. տրված եզրակացությունը.

ՀՀ ոստիկանության կարիքների համար՝ գրասենյակային գույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ԿԱ Ո ԳՀԱՊՁԲ-2018-ԳՈՒՅՔ/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «Տ-Ինդասթրի» ՓԲԸ-ն:

Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է ՀՀ ԿԱ Ո ԳՀԱՊՁԲ-2018-ԳՈՒՅՔ/1 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Հանձնաժողովը 23.04.2018թ. ժամը 11:30-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրությամբ՝ 3-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչել «Տ-Ինդասթրի» ՓԲԸ-ին:

Նույն արձանագրությամբ Հանձնաժողովը որոշել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել մասնակցի հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

Հանձնաժողովը 11.05.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությամբ որոշել է «Տ-Ինդասթրի» ՓԲԸ-ի հայտը մերժել, քանի որ վերջինս հայտը ներկայացնելու օրվա՝ 23.04.2018թ., դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է ժամկետանց պարտավորություն՝ 3.456.111 ՀՀ դրամ գումարի չափով:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստի ժամանակ՝ արտացոլված հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ պատճառաբանություն ներկայացնելով, Ընկերության ներկայացուցիչը հայտնեց, որ տեխնիկական խնդիրների պատճառով 19.04.2018թ. «Տ-Ինդասթրի» ՓԲԸ-ի կողմից 900008000490 հաշվեհամարին իրականացված հարկերի վճարման հանձնարարականը չի հաստատվել բանկի կողմից և չեղարկվել է: Նշված չեղարկման մասին Ընկերությունը տեղեկացել է ավելի ուշ, այդ իսկ պատճառով հարկային վճարումը նույնպես կատարվել է ավելի ուշ:

Միաժամանակ, Ընկերության ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին ներկայացրեց ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 20 բաժնի կողմից 11.05.2018թ. «Տ-Ինդասթրի» ՓԲԸ-ին 23.04.2018թ. և 07.05.2018թ. տրված տեղեկանքները, ինչպես նաև «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի կայքից արտատպված՝ բանկի կողմից 19.04.2018թ. վճարման հանձնարարականը չեղարկելու վերաբերյալ տեղեկատվությունը պարունակող կարճապատկերումը (screenshot):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին,
- 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.
- 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ»

որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

- 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Նույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում նույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

ՀՀ ոստիկանության կողմից հայտարարված ՀՀ ԿԱ Ո ԳՀԱՊՁԲ-2018-ԳՈՒՅՔ/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին մասի՝

- 7.13 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև սույն հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում սույն ենթակետում հարցումն ուղարկվում է

Ashkhen_Papoyan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին սույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով Lusine_Ghahramanyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին.

- 7.15 կետի համաձայն՝ կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 7.13 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին սույն հրավերի 9-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում նույն հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջներին և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Նույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում նույն հրավերի 1-ին մասի 7.20 կետի 2-րդ ենթակետով նախատեսված ընթացակարգը:

Ըստ ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 20 բաժնի կողմից 11.05.2018թ. ստացված տեղեկանքի «Տ-Ինդասթրի» ՓԲԸ-ի պարտավորությունների գումարի չափը 23.04.2018թ. դրությամբ կազմել է՝ 3.926.004 ՀՀ դրամ, իսկ 11.05.2018թ. տրված տեղեկանքի՝ 07.05.2018թ. դրությամբ «Տ-Ինդասթրի» ՓԲԸ-ն հարկային պարտավորություններ չի ունեցել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 6-րդ հոդվածի՝

• 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

• 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

• 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ըստ ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից 10.05.2018թ. Հանձնաժողովին ներկայացրած եզրակացության՝ «Տ-Ինդասթրի» ՓԲԸ-ի ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա (23.04.2018թ.)

դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների գումարը կազմել է՝ 3.456.111 ՀՀ դրամ:

Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ Ընկերությունը 19.04.2018թ. կատարել է 4.134.756 ՀՀ դրամի չափով հարկային պարտավորությունների վճարում, սակայն տեխնիկական վրիպակի հետևանքով «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի կողմից վճարման հանձնարարականը չի հաստատվել և չեղարկվել է:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը գտնում է, որ Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա՝ 23.04.2018թ. դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով՝ Ընկերության կողմից ներկայացրած գնային առաջարկի գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորությունն առաջացել է Ընկերության կողմից նշված պարտավորությունների մարմանն ուղղված վճարումն ընդունող բանկի կողմից վճարման հանձնարարականը չհաստատելու և չեղարկելու հետևանքով, որը Ընկերության կողմից չէր կարող կանխատեսվել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Տ-Ինդասթրի» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 31.05.2018թ. թիվ 03/26-3/9740-18 գրությամբ «Տ-Ինդասթրի» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ